
Ի ՎԵՐՋՈ, Ի՞ՆՉ ԵՍ ՈՒԶՈՒՄ

Posted on May 10, 2023 by Keghart



Category: Opinions

Վահրամ Աղաջանյան, Փոխան խմբագրականի, Ստեփանակերտ, 18 ապրիլ 2023

Ավելի քան 100-ամյա արցախյան հակամարտության ընթացքում հարեւան Ադրբեջանը չի ունեցել եւ մինչ օրս չունի որեւէ օրինական փաստաթուղթ, որը կհաստատեր հայկական հինավուրց մարզի՝ Արցախի նկատմամբ իր նկրտումները: Միակ «փաստաթուղթը» Արցախի մասին Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան Բյուրոյի՝ կուսակցական մարմնի որոշումն է, մարմին, որն իրավունք չունի տարածքային հարցեր լուծելու նույնիսկ սեփական երկրում:

Այժմ, եթե Նիկոլ Փաշինյանը հանկարծ ստորագրի հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատման փաստաթուղթը և դրանով իսկ փաստացի ճանաչի Արցախի նկատմամբ Ադրբեջանի իրավունքը, նման փաստաթուղթ առաջին անգամ կհայտնվի պատմության մեջ (*): Փաշինյանը ոչ միայն օրինականություն կհաղորդի Արցախի և հայ ժողովրդի դեմ Ադրբեջանի նախահարձակման, այլև հայերի ապագա սերունդներին կզրկի մեր պատմական տարածքի նկատմամբ սեփականության իրավունքից: Դա կլինի հայոց ազգային շահերի մեծագույն դավաճանությունը: Դավաճանություն, որի նմանը երբեք չի եղել հայ ժողովրդի պատմության մեջ:

Իրավիճակի ողբերգականությունն այն է, որ Արցախի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի կամ ՀՀ ղեկավարությունից որեւէ մեկի ստորագրելիք որեւէ փաստաթուղթ սկզբից մինչեւ վերջ կլինի ապօրինի: Պարզաբանենք մեր միտքը:

Այս ծիրում կա իրավիճակի զարգացման երեք տարբերակ.

1. Եթե Փաշինյանը Արցախը համարում է առանձին պետություն, ապա նա իրավունք չունի որևէ փաստաթուղթ ստորագրելու այլ պետության անունից:
2. Եթե ՀՀ վարչապետը Արցախը համարում է Ադրբեջանի մաս, ապա նա իրավունք չունի ոչ միայն Արցախի անունից որևէ փաստաթուղթ ստորագրելու, այլև ընդհանրապես մասնակցելու բանակցություններին: Տվյալ դեպքում Ադրբեջանը պետք է բանակցի միայն Արցախի հետ, առանց Հայաստանի Հանրապետության, քանի որ Արցախի հարցը դիտարկվելու է որպես ներպետական խնդիր:
3. Իսկ եթե Փաշինյանը Արցախը համարում է ՀՀ-ի մաս, ինչի մասին նա հայտարարել էր Ստեփանակերտի հանրահավաքում, ապա Ադրբեջանին հանձնելով Արցախի ինչ-որ տարածքներ, նա դրանով իսկ պետական դավաճանության արարք է կատարում, ինչը կրկին ապօրինի է դարձնում նրա որոշումը:

Չափազանց դժվար է հասնել նպատակին, երբ չգիտես, թե ո՛րն է նպատակդ: Անհնար է ճանապարհ անցնել, եթե չգիտես, թե ո՛ւր ես գնում: Անիմաստ է ինչ-որ փաստաթղթեր ստորագրել՝ իմանալով, որ դրանք անպայման կվիճարկվեն եւ կվերանայվեն:

Փաշինյա՛ն, ի վերջո, ի՞նչ ես ուզում:

Քո խոսքերով՝ Արցախը մեկ Հայաստանի Հանրապետության մի մասն է, մեկ՝ առանձին պետություն, մեկ՝ Ադրբեջանի մաս: Կողմնորոշվի՛ր վերջապես: Իսկ եթե չես կարողանում կողմնորոշվել, ապա օգնության համար դիմիր Մոսկվայի, Վաշինգտոնի և Փարիզի այն ընկերներին, ովքեր քեզ իշխանության բերեցին՝ մինչև վերջ չբացատրելով, թե ինչպես պետք է վաճառել Հայրենիքը, որ թե՛ գայլերը կուշտ լինեն, թե՛ բոլորին քաջ հայտնի ոչխարները՝ ողջ մնան...

ԳԵՂԱՐԴ-ի խմբագրութեան ծանօթագրութիւնը.-*Հաստատումը կը վերաբերի յետխորհրդային շրջանի նորագոյն պատմութեան:*

There are no comments yet.